

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՀԱՄԱԿԱՐԳՆԵՐ ԳԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՆԵՐ ԳՐԱԳԱՐԱՆ

ԳՅԴ ԵՍԿ 07թ

«Ազգ եւ ժառանգություն»
Համահայկական
երիտասարդական
գիտաժողով



Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
Ստեփանակերտ
սեպտեմբեր 26-30, 2006թ.

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն
ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն
ՀՀ «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման
կենտրոն» ՊՈԱԿ
ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության պալատ

«Ազգ եւ ժառանգություն»
համահայկական
երիտասարդական
գիտաժողով

Սեպտեմբեր 26-30 2006 թ.
Ստեփանակերտ

Գիտաժողովը նվիրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
հռչակման 15-ամյակին

Խմբագրական խորհուրդ

Ս. Խանյան -բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
գիտության վաստակավոր գործիչ

Վ. Բալայան- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ա. Մխիթարյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Շ. Ասրյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Լ. Բեգլարյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Գրքում զետեղված են սեպտեմբերի 26-30-ը տեղի ունեցած
Համահայկական երիտասարդական գիտաժողովի զեկուցումները

որպես բանական ու զգացմունքային էակի բացահայտմանը և Նրա սկզբունքի գերակայության ապահովմանը:

Եվ հենց «մշակույթ» հասկացությունը ոճաբանական - փիլիսոփայական տեսանկյունից, ասես, համատեքստում է «Մարդու սկզբունքը» այնքանով, որ Մշակույթն արարում է Մարդը: Մարդը Մշակույթն արարարում է Մարդու համար:

Ահա այս բանաձևն է, որ ընկած է հայ նյութական և հոգևոր մշակույթի համակարգի հիմքում և որը, (նեղ առումով՝ գեղագիտական, լայն առումով՝ բարոյագիտական), արժեք դարձած ձևավորում է ողջ հայ մշակույթի գանձարանը:

Ակնհայտ է, որ հայ մշակույթի վերոհիշյալ բոլոր արժեքներն, իսկապես յուրատեսակ են: Դրանք փոխկապակցված բնույթ ունեն: Սա վկայում է ինչպես մշակույթի համակարգի կայացածության, այնպես էլ պատճառակցական մեխանիզմով Նրա հաջորդիվ զարգացման երաշխավորման մասին:

Ուստի, ընկալելով պատմականության զգացումը և ապահովելով գենոկենսաբանական արժեքային գործընթացների նորմալ գործառնությունը, պետք է հստակ գիտակցենք հայ մշակույթի զարգացման կարևորությունը, և այն գիտակցենք ոչ միայն մեր «ես» -ի համար, այլ նաև համաշխարհային մշակույթի ու Մարդու համար:

Սյուզաննա Գրիգորյան

ԱրՊԴ

Սասունցիների կանչը

(Մ. Գալշոյանի «Մարութա սարի ամպերը» պատմվածաշարը)

Հայ ժողովուրդը դարերի ընթացքում ստիպված է եղել թողնել խաղաղ-ստեղծարար աշխատանքը, դիմել գեների փրկելու իր հող հայրենին, իր ազատությունն ու հոգևոր ու նյութական գանձերը: Անթիվ կորուստների գնով նրան հաջողվել է հասնել 21-րդ դարի շեմին և շարունակել հարատևման իր գրույցը քաղաքակիրթ աշխարհի հետ: Սակայն, ավաղ, դաժան է եղել պատմությունը նրա հանդեպ, ծանր՝ նրա ճակատագիրը, քանզի ունեցել է չարամիտ հարևաններ, որոնց դեմ մաքառել են Հայկ Նահապետից սկսած մինչև մեր օրերի քաջազուն հայորդիները: Բաբելացի Բելի դեմ մղված պայքարը շարունակվել է բյուզանդական և պարսկական բռնապետությունների, ապա թաթար-մոնղոլների և սելջուկյան գորշ գայլերի դեմ: Անցել են դարերը, քաղաքակրթությունը կարծես թե փոխել է ժողովուրդներին, սակայն մեր

բախտը չի բերել, որովհետև քաղաքակրթություն կոչված երևույթն ավելի վայրենի է դարձրել թուրք փաշաներին, որոնք կազմակերպեցին 1915թ. հայկական ցեղասպանությունը, իսկ նրանց ժառանգորդները ազերի-թուրք կառավարիչները Սումգայիթ ու Բաքու, Գանձակ ու Մինգիչաուր և այլ հայաշատ բնակավայրեր:

Մեր պատմությունը թելադրում է մեզ ընդգծելու, որ Սարդարապատը Ավարայրի շարունակությունն է, իսկ Արցախյան գոյամարտը՝ Սարդարապատի: Իսկ Սարդարապատից առաջ եղել է Սասուն, եղել են մաքառող սասունցիներ, որոնք իրենց ոգու մեջ միշտ պահպանել են սասնա ծառերի անկուտրում կամքը, հարատևելու վճռականությունը, գալիք սերունդներին ավանդելով թշնամու դեմ մաքառելու հրամայականը:

Այսօր մեզ համար կարևոր է ընդգծել այն երևույթը, որ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը գեղարվեստական իր արտացոլումն է գտել ինչպես մեր դասական, այնպես էլ 20-րդ դարի երկրորդ կեսի ականավոր գրողների ստեղծագործություններում: Նշենք Խ.Դաշտենցի «Ունչպարների կանչը», Ս. Խանգաղյանի «Խոսեք, Հայաստանի լեռներ», Բ. Ուլուբաբյանի «Սարդարապատ» և այլ երկեր, որոնց շարքում ընդգծվում է նաև Մ. Գալշոյանի ստեղծագործությունը:

Ականավոր գրականագետ Սուրեն Աղաբաբյանը ժամանակին գրել է. «Արդեն մի քանի տարի է մասնույում պարբերաբար տպագրվում են Մուշեղ Գալշոյանի «Մարութա սարի ամպերը» շարքի պատմվածքները, որոնց հերոսները մեր օրերը հասած Սասնա տան «վերջին մոհիկաններն են», վերջին սասունցիները: Դրանք այլ միջավայրի կենցաղային-աշխարհագրական-սոցիալական ուրիշ մթնոլորտի ծնունդ են, ուրույն աշխարհայացքով, որոնց ազնվաճաշակ արարքների նկարագրությամբ Մուշեղ Գալշոյանը ցանկանում է արդիական կյանքի մեջ բերել ժառանգորդական կապերը, գտնել էթիկական հիմ փորձի և նոր հոգեբանության ոսկե հատումը» (ժամանակակից հայ արձակը, 1980 էջ 203):

Հիրավի, Մուշեղ Գալշոյանը ստեղծել է այնպիսի կերպարներ, որոնք կրելով կորուսյալ հայրենիքի Սասունի անանցանլի ցավը, եկել – շենացրել են Արագածի լանջերը դաս ու օրինակ դառնալով նոր սերունդների համար:

Տեղին ու ճիշտ է նկատել գրականագետ Մելս Սանթոյանը. «Հայ գրականության կողմից հայկական ցեղասպանության կազմակերպիչների ու իրականացնողների թուրքական ֆաշիզմի մերկացումները,

որպես ռափազմի տարատեսակ, արդիական են» (Մ. Սանթոյան, «Էթիկական կերպարի ստեղծման չափունենքը», 1994, Վանաձոր էջ 101):

«Ձորի Միրոն» վեպի հեղինակը չէր կարող չգրել «Մարութա սարի ամպերը» շարքը: Դա սովորական շարք չէ, այլ ժողովրդի պատմական հիշողության արձագանք, պապերի ու հայրերի խորհուրդ: Շարքի կերպարները տառապանքի մեջ իմաստնացած, երգի կարտոոլ ապրող, նոր օրերում անցյալի հետ իրենց ոգին արյան կանչ դարձրած մարդիկ են: Դա Ձորոն է «Կանչ» պատմվածքում, Քեռի թորոսն է համանուն նովելում, դա Անդրանիկ գորավարի նախնին զինվոր Դավոն է, դա Օսկասարի Օհանն է, երգի կարտոոլ մխացող Թաթոն է, դրանք Խալեն է, Բարսեղը, Բագե Առաքելը, Խուրեցի Ափրեն, Տոնեն, Հագրոն ու Մուսեն են, Տիգրանն ու Մլեհը, Մամփոե արքան է իր փիլիսոփայությանը: Դրանք բոլորը տիպիկ սասունցիներ են, էպոսային կերպարներ: Թափանցիկ են նրանց հոգիները, ներաշխարհը՝ հասկանալի: Այդ կերպարների արշավը 1915-ից սկսվում և հասնում է մեր օրերին: Նրանցից շատերը թեկուզ պլեհեր են, սակայն նրանց հուշերը ջահել են, նրանք երգիր-Հայաստանից սկիզբ առած սասունական առուներ են, որոնց կարկաչը պատմության դաս դարձած եկամ-հասավ Արցախ, արձագանք գտավ Մոզլի և Քիրսի լանջերին, Թարթառի ու Խաչենի ափերին, արցախյան գոյամարտի հերոսների սրտերում:

Մուշեղ Գալշոյանի «Մարութա սարի ամպերը» պատմվածաշարը հայ արձակի նշանակալից էջերից է, նրանում առաջին հերթին երկիրը կորցրած մարդկանց մրմուռի չափ վառող կարոտի զգացումն է: Պատերազմն արհավիրք է: Ձորոն, որ երգրում սիրել էր Ալեին և կորցրել, իր սիրած եակին հանդիպում է հիսունհինգ տարի անց: Ապա վեց տարի անց 72-ամյա Ձորոն որոշում է փախցնել Ալեին: Դառնում է իսկական Սասնա ծուռ, բաժանվում է կնոջից: Սակայն պարզվում է, որ Ձորոյին այդ արարքին է մղում ոչ միայն Ալեի, այլև երգի սերը: Ձորոյի սերը ընթերցողին հուշում է այն ճշմարտությունը, որ ոչ պատերազմը, ոչ էլ տարիքը չեն կարող աղճատել առաջին սիրո զգացումը:

Սիմվոլիկ մի պատկեր է «Քեռի թորոսը» նովելը: Թորոսը կարմիր կտորի մեջ փաթաթած թուրը բերել էր գրից: Եվ երբ հարսը չիմանալով վճանում է այդ կտորը, Թորոսի համար անեանում է իրեն խելքահան անող բույրը: Այդ կտորը երգիրը հիշեցնող մի նշխար է Թորոսի համար: Թորոսը միշտ երազում է վերադառնալ երգիր, վրեժխնդիր լինել մանկության տարիներին իրեն ցավ պատճառած Մահմեդ էֆենտուց: Մահից առաջ նա պատվիրում է թոռանը. «Ձուկ, ետ դառնաս իմ եկած

ճամփով: Են ճամփեն սար ու ձորի մեջ քանց թել խճճված, կռվի ու կոտորումի իմ մուրը ճամփեն դու կծկիս ու ետ դառնաս, ձգուկ»:

«Դավոն» նովելում ամենուրեք հնչում է «Ով գարկվի դավաճան է» ֆիդայական թախսման-խոսքը, որը հաղթանակի կոչ է:

Թաթոն Սերոբի եզները խնդրել է, որ նոր բնակավայրում իր արտը վարի, սակայն նրա ուշքն ու միտքը երգի, իրենց Հլու եզան հետ են: Իսկ Բարսեղը փնտրում ու գտնում է այն զինարք ծաղիկը, որ հիշեցնում էր երգրում բույր տվող ծաղիկը:

Մուշեղ Գալշոյանի ստեղծագործությունը դասն է ժողովրդական այն իմաստության ըստ որի փրկության և հարատևման միջոցներից մեկը սրով ապրելու խորհուրդն է: Իսկ երկրորդը մայրենի լեզուն է, մայրենի այբուբենը:

Ծանոթանալով անվանի գրողի «Մարութա սարի ամպերը» պատմվածաշարին, ակամայից մտքով թևում ես Սասուն, գրուցում էպոսային սասունցիների հետ, ապա գալիս և հասնում ես Արցախ աշխարհի, համոզվում, որ արցախցիների ոգին իր արմատներով հասնում է Սասուն, կոփվում Սասնա ձեռերի խենթ վճռականությամբ, որի ապացույցը ազատագրված մեր Արցախն է, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որ դեռևս սպասում է իր այնպիսի զեղազեղվարպետին, որպիսին Մուշեղ Գալշոյանն է:

*Արմեն Ավանեսյան
ԵՊԴ*

**Պետականության գաղափարի շուրջ
(Վ. Գրիգորյանի «Դար կորստյան» վեպը)**

Վարդան Գրիգորյանը գրողի այն տիպն է, որ հակված է կերպավորելու գրականության առարկան: Իրենից առաջ պատմավեպեր էին գրում պատմական այս կամ այն հերոսական շրջանի մասին, ինքը փորձեց շրջանցել հերոսներին: Հերոսական իրադարձություններն ու պատմական դարակազմիկ բարեփոխությունները չգրավեցին իր սիրտը: Անկում, ազգային ողբերգության հոգեբանական դրդիչներ, կործանման կանխագագացում՝ ահա թե ինչը դարձրեց պատմավեպի առարկա «Դար կորստյան» վեպում:

Վեպը մասերի չի բաժանված, չունի հետևողական դիպաշար, կառուցված է ներքին մենախոսության և վերհուշապատումների վրա: Հետևողական և գործողություններով հագեցած շարադրանքին այստեղ

Ֆորմատ 84x60/8, ծավալը՝ 10.5 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 300, թուղթ՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ
*Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի փող., 21,
հեռ 4-89-96, 4-89-97, 4-89-98,*

